



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10փ 1-ն նրբ, 1 2

հեռ'. _____
Էլ. փոստ 'sarahart.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ

Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում եմ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 28-Ա, թիվ 29-Ա, թիվ 30-Ն, թիվ 31-Ն և թիվ 32-Ն որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:



Վ. Փիլոյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10փ 1-ն նրբ, 1 2

հեռ՝ _____
Էլ. փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ 28 - Ա

«13» դեկտեմբերի 2017 թվական

**ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍԻՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի - ի նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

Սարահարթ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի նիստի.

1. Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
2. Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Սարահարթ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Սարահարթ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի եվ վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին
4. Սարահարթ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու և Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Սարահարթ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

Համայնքի ավագանու Անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարիկյան Հարություն			
Հալաջյան Արթուր			
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյուկա			
Քոթանջյան Էդգար			



Համայնքի ղեկավար՝

Վ. Փիլոյան

Գ. Սարահարթ
02.11..2017թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10փ 1-ն նրբ. 1 2

հեռ.՝ _____
Էլ. փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» դեկտեմբերի 2017 թվական, 29 -Ա

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 13-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

- Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
- Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու Անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարիկյան Հարություն	<i>[Signature]</i>		
Հալաջյան Արթուր	<i>[Signature]</i>		
Մանուկյան Նազար	<i>[Signature]</i>		
Սահակյան Լյովա	<i>[Signature]</i>		
Քոթանջյան Էդգար	<i>[Signature]</i>		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՓԻԼՈՅԱՆ

Գ. Սարահարթ
13.12.2017թ



ՑՈՒՑԱԿ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Միմոնյան Վահե Գևորգի	15,0/տասնհինգ/ հազար դ.(երեխայի ծննդյան գումար)
2. Հովհաննիսյան Լյովա Հովհաննեսի	15,0/տասնհինգ/ հազար դ.(երեխայի ծննդյան գումար)
3. Բարիկյան Անդրանիկ Արտաշեսի	15,0/ տասնհինգ / հազար դ.(երեխայի ծննդյան գումար)
4. Հովսեփյան Կարեն Մարտունի	40,0/քառասուն/ հազար դ.(սոց.օգնություն) /հարազատին կորցրած/
5. Պետրոսյան Արսեն Վասիլի	40,0/քառասուն/ հազար դ.(սոց.օգնություն) /հարազատին կորցրած/
6. Խաչատրյան Նաիրա Խաչիկի	50,0/հիսուն/ հազար դ.(սոց.օգնություն)
7. Գևորգյան Լավրենտ Համբարձումի	30,0/երեսուն/ հազար դ.(սոց.օգնություն)
8. Մադանցյան Հրահատ Զավենի	30,0/երեսուն/ հազար դ.(սոց.օգնություն)
9. Կասեմյան Ռոբերտ Ավետիքի	30,0/երեսուն/ հազար դ.(սոց.օգնություն)
10. Քոչարյան Անահիտ Գեղամի	33,0/երեսուներեք/ հազար դ.(սոց.օգնություն)
11. Գևորգյան Լիաննա Միքի	40,0/քառասուն/ հազար դ.(սոց.օգնություն)
12. Խումարյան Արտուշ Արամայիսի	30,0/երեսուն/ հազար դ. (սոց.օգնություն)

Համայնքի ղեկավար



Վ. Փիլոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10 փ 1-ն նրբ. 1 2

հեռ. _____
Էլ. փոստ `sarahart.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 13 » դեկտեմբերի 2017 թվական թիվ 30 -Ն

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի
« ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ »
ԹԻՎ 30 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, առաջնորդվելով
«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Իրավական ակտերի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով 34-րդ հոդվածի 1-
ին կետով և 70-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սարահարթ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի
«Սարահարթ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-
Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ
համաձայն թիվ 2, թիվ 3 և թիվ 6 հավելվածների:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ
արդարադատության նախարարություն՝ պետական իրավական
փորձաքննության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարիկյան Հարություն			
Հալաջյան Արթուր			
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Էդգար			

Սարահարթ համայնքի ղեկավար

Վ. Փիլոյան

2017 թ. դեկտեմբերի 13
գ. Սարահարթ



ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Ղաա	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամե նը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչակա ն բյուջե	ֆոնդայ ին
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500 +տող2600+ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԻ ԲՅՈՒՋԵՏԻ ԴԱՍԻՆՏԻՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150 +տող2160+տող2170+տող2180)	42691.6	34223.2	8468.4
2100	01	0	0	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150 +տող2160+տող2170+տող2180)	21496.4	21128.0	368.4
				այդ թվում՝			
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	19668.0	19668.0	0.0
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական	19668.0	19668.0	0.0
				որից՝			
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ	60.0	60.0	0.0
				որից՝			
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	60.0	60.0	
				որից՝			
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1768.4	1400.0	368.4
				որից՝			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1768.4	1400.0	368.4
				որից՝			
				որից՝			
				որից՝			
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250)	200.0	200.0	0.0
				այդ թվում՝			
				որից՝			
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն	200.0	200.0	0.0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	200.0	200.0	
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				այդ թվում՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450 +տող2460+տող2470+տող2480+տող2490)	11080.0	4680.0	6400.0
				այդ թվում՝			
				որից՝			
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	9480.0	3380.0	6100.0
				որից՝			
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	100.0	100.0	0.0
2424	04	2	4	Ոռոգում	9380.0	3280.0	6100.0
				որից՝			
2450	04	5	0	Տրանսպորտ	2300.0	1300.0	1000.0
				որից՝			
2451	04	5	1	Ծանապարհային տրանսպորտ	2300.0	1300.0	1000.0
				որից՝			
				որից՝			

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամեն ընդ (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչակա ն բյուջե	ֆոնդայ ին
1	2	3	4	5	6	7	8
				ռոհգ՝			
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-700.0	0.0	-700.0
				ռոհգ՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին	-700.0		-700.0
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550	1300.0	1300.0	0.0
				առ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	1300.0	1300.0	0.0
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	1300.0	1300.0	
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650 +տող3660)	3210.0	1510.0	1700.0
				առ թվում՝			
				ռոհգ՝			
				ռոհգ՝			
2630	06	3	0	Ջրամատակարարում	1550.0	850.0	700.0
				ռոհգ՝			
2631	06	3	1	Ջրամատակարարում	1550.0	850.0	700.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	1660.0	660.0	1000.0
				ռոհգ՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	1660.0	660.0	1000.0
				ռոհգ՝			
				առ թվում՝			
				որից՝			
				ռոհգ՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850 +տող2860)	1130.0	1130.0	0.0
				այդ թվում՝			
				որից՝			
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	380.0	380.0	0.0
				որից՝			
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	380.0	380.0	
				որից՝			
2840	08	4	0	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	300.0	300.0	0.0
				որից՝			
2841	08	4	1	Երիտասարդական ծրագրեր	300.0	300.0	
				որից՝			
2860	08	6	0	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	450.0	450.0	0.0
				որից՝			
2861	08	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	450.0	450.0	

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամե նը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչակա ն բյուջե	ֆոնդայ ին
1	2	3	4	5	6	7	8
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950 +տող2960+տող2970+տող2980)	800.0	800.0	0.0
				առ թվում՝			
				որից՝			
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	200.0	200.0	0.0
				որից՝			
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	200.0	200.0	
				որից՝			
2940	09	4	0	Բարձրագույն կրթություն	600.0	600.0	0.0
				որից՝			
2941	09	4	1	Բարձրագույն մասնագիտական կրթություն	600.0	600.0	
				որից՝			
				որից՝			
				որից՝			
				որից՝			
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050 +տող3060+տող3070+տող3080+տող3090)	1050.0	1050.0	0.0
				առ թվում՝			
				որից՝			
				որից՝			
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք	100.0	100.0	0.0
				որից՝			
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք	100.0	100.0	
3040	10	4	0	Ընտանիքի անդամներ և զավակներ	200.0	200.0	0.0
				որից՝			
3041	10	4	1	Ընտանիքի անդամներ և զավակներ	200.0	200.0	
				որից՝			
				որից՝			
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	750.0	750.0	0.0
				որից՝			
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	750.0	750.0	
				որից՝			
				որից՝			
				որից՝			
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)	2425.2	2425.2	0.0
				այդ թվում՝			
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների	2425.2	2425.2	0.0
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	2425.2	2425.2	

ՀԱՏՎԱԾ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամեն ը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչակա ն մաս	ֆոնդայ ին մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		42691.6	34223.2	8468.4
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500)	x	34223.2	34223.2	0.0
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ	x	15498.0	15498.0	x
4110	ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող4111+տող4112+ տող4114)	x	15498.0	15498.0	X
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարձեր	4111	14568.0	14568.0	X
4112	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	930.0	930.0	X
4114	-Այլ վարձատրություններ	4115	0.0	0.0	X
4120	ԲՆԵՂԵՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	x	0.0	0.0	X
4121	-Բնեղեն աշխատավարձեր և հավելվածարձեր	4121	0.0	0.0	X
4130	ՓԱՍՏԱՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ	x	0.0	0.0	X
4131	-Սոցիալական ապահովության վճարներ	4131	0.0	0.0	x
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	14270.0	14270.0	X
	այդ թվում՝		0.0		
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող4211+տող4212+տող4213+տող4214+տող4215 +տող4216+տող4217)	x	3095.0	3095.0	X
4211	-Գործառնական և բանկային ծառայությունների	4211	0.0	0.0	X
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	1375.0	1375.0	X
4213	-Կոմունալ ծառայություններ	4213	1200.0	1200.0	X
4214	-Կապի ծառայություններ	4214	200.0	200.0	X
4215	-Ապահովագրական ծախսեր	4215	140.0	140.0	X
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	0.0	0.0	X
4217	-Արտագերատեսչական ծախսեր	4217	180.0	180.0	X
4220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող4221+տող4222+տող4223)	x	120.0	120.0	X
4221	-Ներքին գործուղումներ	4221	120.0	120.0	X
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	0.0	0.0	X
4223	-Այլ տրանսպորտային ծախսեր	4229	0.0	0.0	X
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4231+տող4232+տող4233+տող4234+տող4235)	x	1460.0	1460.0	X
4231	-Վարչական ծառայություններ	4231	0.0	0.0	X
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	130.0	130.0	X
4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման	4233	0.0	0.0	X
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	150.0	150.0	X
4235	-Կառավարչական ծառայություններ	4235	180.0	180.0	X
4236	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236	0.0	0.0	X
4237	-Ներկայացուցչական ծախսեր	4237	0.0	0.0	X
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1000.0	1000.0	X
4240	ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող 4241)	x	755.0	755.0	X
4241	-Մասնագիտական ծառայություններ	4241	755.0	755.0	X
4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող4251+տող4252)	x	3090.0	3090.0	X

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամեն ը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչակա ն մաս	ֆոնդայ ին մաս
1	2	3	4	5	6
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և	4251	3090.0	3090.0	X
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ	4252	0.0	0.0	X
4260	<i>ՆՅՈՒԹԵՐ</i> (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265 +տող4266+տող4267+տող4268)	x	5750.0	5750.0	X
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	250.0	250.0	X
4262	-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	0.0	0.0	X
4263	-Վերապատրաստման և ուսուցման նյութեր (աշխատողների վերապատրաստում)	4263	0.0	0.0	X
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	1850.0	1850.0	X
4265	-Միջազգային կապերի պաշտպանության և հեռակապի միջոցներ	4265	0.0	0.0	X
4266	-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	0.0	0.0	X
4267	-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	50.0	50.0	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	3600.0	3600.0	X
4300	<i>1.3 ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ (տող4310+տող</i>	x	0.0	0.0	X
4310	<i>ՆԵՐՔԻՆ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ (տող4311+տող4312)</i>	x	0.0	0.0	x
4311	-Ներքին արժեթղթերի տոկոսավճարներ	4411	0.0	0.0	X
4312	-Ներքին վարկերի տոկոսավճարներ	4412	0.0	0.0	X
4320	<i>ԱՐՏԱՔԻՆ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ (տող4321+տող4322)</i>	x	0.0	0.0	X
4321	-Արտաքին արժեթղթերի գծով տոկոսավճարներ	4421	0.0	0.0	X
4322	-Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	0.0	0.0	X
4330	<i>ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՎՃԱՐՆԵՐ</i> (տող4331+տող4332+տող4333)	x	0.0	0.0	X
4331	-Փոխանակման կուրսերի բացասական	4431	0.0	0.0	X
4332	-Տույժեր	4432	0.0	0.0	X
4333	-Փոխառությունների գծով տուրքեր	4433	0.0	0.0	X
4400	<i>1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ (տող4410+տող4420)</i>	x	0.0	0.0	X
4410	<i>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4411+տող4412)</i>	x	0.0	0.0	x
4411	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	0.0	0.0	X
4412	-Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4512	0.0	0.0	X
4420	<i>ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ (ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4421+տող4422)</i>	x	0.0	0.0	X
4421	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	4521	0.0	0.0	X
4422	-Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ֆինանսական կազմակերպություններին	4522	0.0	0.0	X
4500	<i>1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ</i> (տող4510+տող4520+տող4530+տող4540)	x	100.0	100.0	X
4510	<i>ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐԵՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4511+տող4512)</i>	x	0.0	0.0	x
4511	-Ընթացիկ դրամաշնորհներ օտարերկրյա	4611	0.0	0.0	X
4512	-Կապիտալ դրամաշնորհներ օտարերկրյա	4612	0.0	0.0	X
4520	<i>ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՄԻԶԱԶՊԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4521+տող4522)</i>	x	0.0	0.0	
4521	-Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4621	0.0	0.0	X
4522	-Կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	4622	0.0	0.0	X

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամեն ը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4530	<i>ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ</i>	x	100.0	100.0	X
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	4637	100.0	100.0	X
4532	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային	4638	0.0	0.0	X
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	0.0	0.0	X
4534	- տեղական ինքնակառավարման մարմիններին (տող 4535+տող 4536)		0.0	0.0	X
4535	Ֆինանսավորման համար		0.0		X
4536	այլ համայնքներին		0.0	0.0	X
4537	- ՀՀ պետական բյուջեին		0.0		X
4538	- այլ		0.0	0.0	X
4540	<i>ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՅՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ</i> (տող4541+տող4542+տող4543)	x	0.0		x
4541	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային	4655	0.0		x
4542	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային	4656	0.0		x
4543	-Այլ կապիտալ դրամաշնորհներ (տող 4544+տող	4657	0.0	0.0	x
4544	- տեղական ինքնակառավարման մարմիններին (տող 4545+տող 4546)		0.0		x
	որից՝		0.0		
4545	Երևանի համաքաղաքային ծախսերի		0.0		x
4546	ՀՀ այլ համայնքներին		0.0		x
4547	- ՀՀ պետական բյուջեին		0.0		x
4548	- այլ		0.0	0.0	x
4600	<i>1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ</i> (տող4610+տող4630+տող4640)	x	1450.0	1450.0	X
4610	<i>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ</i>		0.0	0.0	X
4610	- Տնային տնտեսություններին դրամով վճարվող սոցիալական ապահովության վճարներ	4711	0.0	0.0	X
4620	- Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին	4712	0.0	0.0	X
4630	<i>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)</i>	x	1450.0	1450.0	X
4631	-Հոլդարկապիորության նպաստներ բյուջեից	4726	100.0	100.0	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային	4727	0.0	0.0	X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	0.0	0.0	X
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	1350.0	1350.0	X
4640	<i>ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ</i> (տող4641)	x	0.0	0.0	X
4641	-Կենսաթոշակներ	4741	0.0		X
4700	<i>1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</i> (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750 +տող4760+տող4770)	x	2905.2	2905.2	0.0
4710	<i>ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ</i>	x	280.0	280.0	X
4711	- Տնային տնտեսություններին ծառայություններ մատուցող՝ շահույթ չհետապնդող	4811	0.0	0.0	X
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	280.0	280.0	X
4720	<i>ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ</i>	x	200.0	200.0	X
4721	-Աշխատավարձի ֆոնդ	4821	0.0	0.0	X

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամեն ը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4722	-Այլ հարկեր	4822	0.0	0.0	X
4723	-Պարտադիր վճարներ	4823	200.0	200.0	X
4724	-Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր	4824	0.0	0.0	X
4730	ՊԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳՎԱՔՆԵՐ (տող4731)	x	0.0	0.0	X
4731	-Դատարանների կողմից նշանակված տույժեր և	4831	0.0		X
4740	ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՍ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՍ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (տող4741+տող4742)	x	0.0	0.0	X
4741	-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	4841	0.0		X
4742	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	4842	0.0		X
4750	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՍ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (տող4751)	x	0.0	0.0	X
4751	-Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ	4851	0.0		X
4760	ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4761)	x	0.0	0.0	X
4761	-Այլ ծախսեր	4861	0.0	0.0	X
4770	ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771)	x	2425.2	2425.2	0.0
4771	-Պահուստային միջոցներ	4891	2425.2	2425.2	
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող	x	0.0	0.0	
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x	9168.4	X	9168.4
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130)	x	9168.4	X	9168.4
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113)	x	8400.0	x	8400.0
5111	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	0.0	X	0.0
5112	- Շենքերի և շինությունների շինարարություն	5112	1000.0	X	1000.0
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ	5113	7400.0	X	7400.0
5120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	x	768.4	x	768.4
5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	0.0	X	0.0
5122	- Վարչական սարքավորումներ	5122	368.4	X	368.4
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	400.0	X	400.0
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0.0	x	0.0
5131	-Աճեցվող ակտիվներ	5131	0.0	X	0.0
5132	- Ոչ նութական հիմնական միջոցներ	5132	0.0	X	0.0
5133	- Գեոդեզիական քաղտեգագրական ծախսեր	5133	0.0	x	0.0
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	0.0	x	0.0
5200	1.2 ՊԱՇԱՐՆԵՐ	x	0.0	X	0.0
5211	- Համայնքային նշանակության ռազմավարական	5211	0.0	X	
5221	- Նյութեր և պարագաներ	5221	0.0	X	0.0
5231	- Վերավաճառքի համար նախատեսված	5231	0.0	X	
5241	-Սպառման նպատակով պահվող պաշարներ	5241	0.0	X	
5300	1.3 ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5311)	x	0.0	X	0.0
5311	-Բարձրարժեք ակտիվներ	5311	0.0	X	
5400	1.4 ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ (տող 5411+տող 5421+տող 5431+տող5441)	x	0.0	X	0.0

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
	անվանումները	NN		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
5411	-Հող	5411	0.0	X	
5421	-Ընդերքային ակտիվներ	5421	0.0	X	
5431	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431	0.0	X	
5441	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ	5441	0.0	X	
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	-700.0	X	-700.0
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130)	x	-600.0	X	-600.0
6110	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8111	0.0	x	0.0
6120	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8121	0.0	x	0.0
6130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8131	-600.0	X	-600.0
6200	(տող6210+տող6220)	x	0.0	X	0.0
6210	ՊԱՇՏՊԱՐԱԿԱՆ ՀԱՍՈՅՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ	8211	0.0	X	0.0
6220	ԱՅԼ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6221+տող6222+տող6223)	x	0.0	X	0.0
6221	- Արտադրական պաշարների իրացումից մուտքեր	8221	0.0	X	0.0
6222	մուտքեր	8222	0.0	X	0.0
6223	- Սպառման համար նախատեսված պաշարների	8223	0.0	X	0.0
6300	(տող 6310)	x	0.0	X	0.0
6310	ԲԱՐՉՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8311	0.0	X	0.0
6400	ՀԱՐՑԱՌ ԴԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	x	-100.0	X	-100.0
6410	ՀՈԴԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8411	-100.0	X	-100.0
6420	ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8412	0.0	X	0.0
6430	ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8413	0.0	X	0.0
6440	ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8414	0.0	X	0.0

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա- ժին	Խու- մբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչակա- ն բյուջե	ֆոնդայի ն բյուջե
1	2	3	4	5		6	7	8
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+ տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+ տող3100)		42691.6	34223.2	8468.4
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+ տող2150+տող2160+տող2170+տող2180)		21496.4	21128.0	368.4
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ		19668.0	19668.0	0.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		19668.0	19668.0	0.0
				ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ	x	15498.0	15498.0	
				1,1 Աշխատանքի վարձատրություն	x	15498.0	15498.0	
				-Աշխատողների աշխատավարձեր և	411100	14568.0	14568.0	
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	411200	930.0	930.0	
				2 Ծառայությունների և ապրանքների	x	4070.0	4070.0	
				2.1 Շարունակական ծախսեր		1495.0	1495.0	
				-Էներգետիկ ծառայություններ	421200	975.0	975.0	
				-Կապի ծառայություններ	421400	200.0	200.0	
				-Ապահովագրական ծախսեր	421500	140.0	140.0	
				-Արտագերատեսչական ծախսեր	421700	180.0	180.0	
				2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	120.0	120.0	
				-Ներքին գործուղումներ	422100	120.0	120.0	
				2.3 Պայմանագրային այլ ծառայությունների ծեռք բերում	x	400.0	400.0	
				-Համակարգչային ծառայություններ	423200	70.0	70.0	
				-Տեղակատվական ծառայություններ	423400	150.0	150.0	
				-Կառավարչական ծառայություններ	423500	180.0	180.0	
				2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ծեռք բերում	x	55.0	55.0	
				-Մասնագիտական ծառայություններ	424100	55.0	55.0	
				2.6 Նյութեր	x	2000.0	2000.0	
				-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	250.0	250.0	
				-Տրանսպորտային նյութեր	426400	1500.0	1500.0	

Տողի NN	Բա- ժին	Խու- մը	Ղաա	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչակա ն բյուջե	ֆոնդայի ն բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	50.0	50.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	200.0	200.0	
				7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	100.0	100.0	
				7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ	x	100.0	100.0	
				-Պարտադիր վճարներ	482300	100.0	100.0	
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ		60.0	60.0	
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		60.0	60.0	
				-Համակարգչային ծառայություններ	423200	60.0	60.0	
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին		1768.4	1400.0	368.4
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին		1768.4	1400.0	368.4
				-Ընդհանուր բնույթի այլ	423900	300.0	300.0	
				-Մասնագիտական ծառայություններ	424100	200.0	200.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	900.0	900.0	
				-Վարչական սարքավորումներ	512200	368.4		368.4
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն որից՝		200.0	200.0	0.0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն		200.0	200.0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի		0.0		
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	481900	200.0	200.0	
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+ տող2450+տող2460+տող2470+տող2480+		11080.0	4680.0	6400.0
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն որից՝		9480.0	3380.0	6100.0
2421	04	2	1	Գյուղատնտեսություն		100.0	100.0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		0.0		
				-Մասնագիտական ծառայություններ	424100	100.0	100.0	
				- Սոցիալական ապահովության վճարներ	413100	0.0	0.0	
2424	04	2	4	Ոռոգում		9380.0	3280.0	6100.0
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	1940.0	1940.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	1340.0	1340.0	
				-Շենքերի և շինությունների շինարարություն	511200	0.0		0.0

Տողի NN	Բա- ժին	Խու- մը	Պատ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչակա ն բյուջե	ֆոնդայի ն բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	6100.0		6100.0
2450	04	5	0	Տրանսպորտ		2300.0	1300.0	1000.0
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		2300.0	1300.0	1000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ այլ բյուջեների ծախսերի		0.0		
				-Շենքերի և կառույցների ընթացիկ	425100	950.0	950.0	
				-Տրանսպորտային նյութեր	426400	350.0	350.0	
				-Շենքերի և շինությունների կապիտալ	511300	1000.0		1000.0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		-700.0	0.0	-700.0
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		-700.0		-700.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի		0.0		
				ՍՈՒՏՔԵՐ	8121	0.0		0.0
				ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8111	0.0		0.0
				ՍՈՒՏՔԵՐ	8121	0.0		0.0
				ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8131	-600.0		-600.0
				ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ	8411	-100.0		-100.0
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տոող2510+տոող2520+տոող2530+տոող2540+ այլ թվում՝		1300.0	1300.0	0.0
2510	05	1	0	Աղբահանում		1300.0	1300.0	0.0
				որից՝				
2511	05	1	1	Աղբահանում		1300.0	1300.0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ				
				-Գույքի և սարքավորումների	421600	0.0	0.0	
				-Պարտադիր վճարներ	482300	0.0	0.0	
				-Կոմունալ ծառայություններ	421300	1000.0	1000.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	300.0	300.0	
2630	06	3	0	Ջրամատակարարում		1550.0	850.0	700.0
				որից՝				
2631	06	3	1	Ջրամատակարարում		1550.0	850.0	700.0
				-Այլ ծախսեր	486100	0.0	0.0	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	0.0	0.0	
				-Կոմունալ ծառայություններ	421300	200.0	200.0	
				-Սասնագիտական ծառայություններ	424100	400.0	400.0	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0.0	0.0	
				-Տրանսպորտային նյութեր	426400	0.0	0.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	150.0	150.0	
				-Պարտադիր վճարներ	482300	100.0	100.0	

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Ղաա	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչակա- ն բյուջե	ֆոնդայի ն բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	0.0		0.0
				-Շենքերի և շինությունների կապիտալ	511300	300.0		300.0
				-Այլ մեքենաներ և սարքավորումներ	512900			400.0
2640	06	4	0	Փողոցների լուսավորում		1660.0	660.0	1000.0
				որից՝				
2641	06	4	1	Փողոցների լուսավորում		1660.0	660.0	1000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման		0.0		
						0.0		
				-Էներգետիկ ծառայություններ	421200	400.0	400.0	
				-Ընդհանուր բնույթի այլ	423900	0.0	0.0	
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100	0.0	0.0	
				-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	0.0	0.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	260.0	260.0	
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	1000.0		1000.0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅՑ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+ տող2850+տող2860)		1130.0	1130.0	0.0
				այդ թվում՝		0.0		
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ		380.0	380.0	0.0
				որից՝				
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ		380.0	380.0	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	300.0	300.0	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	481900	80.0	80.0	
2840	08	4	0	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ		300.0	300.0	0.0
				որից՝		0.0		
2841	08	4	1	Երիտասարդական ծրագրեր		300.0	300.0	
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423900	200.0	200.0	
				-Ներկայացուցչական ծախսեր	423700	0.0	0.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	100.0	100.0	
2860	08	6	0	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		450.0	450.0	0.0
				որից՝				
2861	08	6	1	Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)		450.0	450.0	
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի		0.0		
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	200.0	200.0	

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Ղաա	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչակա- ն բյուջե	ֆոնդայի ն բյուջե
1	2	3	4	5		6	7	8
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	250.0	250.0	
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+ տող2950+տող2960+տող2970+տող2980)		800.0	800.0	0.0
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և	463700	0.0		
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն		200.0	200.0	0.0
				որից՝				
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն		200.0	200.0	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	100.0	100.0	
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և	463700	100.0	100.0	
2940	09	4	0	Բարձրագույն կրթություն		600.0	600.0	0.0
				որից՝				
2941	09	4	1	Բարձրագույն մասնագիտական		600.0	600.0	
				-Ընդհանուր բնույթի այլ	423900	200.0	200.0	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	400.0	400.0	
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+ տող3050+տող3060+տող3070+տող3080+ տող3090)		1050.0	1050.0	0.0
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք		100.0	100.0	0.0
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք		100.0	100.0	
				-Հուղարկավորության նպաստներ բուժենք	472600	100.0	100.0	
3040	10	4	0	Ընտանիքի անդամներ և զավակներ		200.0	200.0	0.0
				որից՝				
3041	10	4	1	Ընտանիքի անդամներ և զավակներ		200.0	200.0	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	200.0	200.0	
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		750.0	750.0	0.0
				որից՝				
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		750.0	750.0	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	750.0	750.0	
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԳԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)		2425.2	2425.2	0.0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ		2425.2	2425.2	0.0
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		2425.2	2425.2	0.0
				-Պահուստային միջոցներ	489100	2425.2	2425.2	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնք,
հասցե գ. Սարահարթ 10փ 1-ն նրբ, 1 2

հեռ՝ _____
Էլ. փոստ՝ sarahart.ori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» դեկտեմբերի 2017 թ. N 31 -Ն

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1.բ և 1.ե ենթակետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով՝ Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 6-ի «Սարահարթ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի եվ տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 2--Ն որոշումը:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բարիկյան Հարություն			
Հալաբյան Արթուր			
Մանուկյան Նազար			
Սահակյան Լյովա			
Քոթանջյան Էդգար			

Համայնքի ղեկավար

Վ. Փիլոյան

13.12.2017թ.
Գ. Սարահարթ



Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 13-ի 31-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ**

1. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ:

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ:

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ տասնհինգ հազար դրամ:

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ:

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնութ հազար դրամ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վեց հազար դրամ:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տասնհինգ հազար դրամ:

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ:

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ:

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ:

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար դրամ:

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ:

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր դրամ:

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ:

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնչորս հազար դրամ:

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ երկու հազար հազար դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ութ հարյուր հազար:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ վաթսուն հազար դրամ:

դ. խաղատների համար՝ մեկ հարյուր հիսուն հազար:

ե. շահումով խաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ երեսուն հազար դրամ:

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հարյուր դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հարյուր դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար երեք հարյուր դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ավելի քան 20 օրվա ընթացքում մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ վեց հարյուր դրամ:

բ. թունդ ավելի քան 20 օրվա ընթացքում մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հիսուն դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ չորս հարյուր հիսուն դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և այլն), որպես օբյեկտ գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ երեք հազար դրամ:

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ հարյուր հիսուն հազար դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն մեկ հարյուր հազար դրամ:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն դրամ:

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել քսան հազար դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը,

արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել քսանհինգ հազար դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել քսանհինգ հազար դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեսուն հազար դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեսուն հազար դրամ:

